



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6691

Aphyllon f. rufum
Aphyllon f. rufum

891.99
u-86

Y. D. D. D.
(1864)



ԵՐԵՒԵԼԵՆԻ ՓՆԵՐ

891.99
4-86

պ

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՆՈՒՒՐԷ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ


Ն. Դ. Վ



Printed in Turkey

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

)(1864)(



Printed in Turkey

f 85 - 88721

2003

(8228
41)

Printed in Turkey

ԱՐԵՒԵԼԵՆՆ ՔՆԵՐ

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՆՈՒՒՐԷ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Ն . Գ . Վ

Տ Ե Տ Ր 1.

1. Շատ կ'նախաձեռնէք օտար ազգաց իրենց լեզուով սիրահարական երգեր երգելը լսելով, սոյն նախանձով վառուած տկար գրիչնիս ձեռք առինք :
2. Հրատարակածնիս բան մը չըլլալուն, կարծեմ սիրելի ընթերցողներս արժանի չեն տեսներ բանաստեղծութեան ճաշակ մը տալու յանդիմանքէ ըսելու, եւ հետեւապէս ներողամիտ կըլլան պակասութեանցս :
3. Գիտէինք որ մեր հրատարակածները հայ երիտասարդութիւնը գոհ պիտի չընէր, բայց կըյուսայինք եւ կըյուսամք ալ որ գեթգագիումը պիտի ըլլանք ազգայնոցս օր մը ասոնցմէ խիստ աղեկները վայելելուն :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Պ. Ն. ՊԵՏ. ՇԱՐՔԻ
 ՊՐ. Ս. ԵՄԵ-ՄԱ
 ՊՐ. Գ. Գ.
 ՊՐ. Գ. Գ.
 ՊՐ. Գ. Գ.
 ՊՐ. Գ. Գ.

Printed in Turkey

Указан в журнале


Указан в журнале

Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале

Указан в журнале

Указан в журнале

Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале
Указан в журнале



30247-И.н.

(62284
41)

12788-58

ՍԼՄԸՅԻ

Հատոնց ՚ի վեր չնաշխարհիկ սիրոյս տեսքէն զըրրկ-
ուեցայ

Որչափ սրտով սր սիրեցի այնչափ անձամբ ալ հե-
ուացայ

Չեղլար մտքէս այն օրն որ առջի անգամ տեսնըու-
եցայ

Միտք չընելով անցածները նոր ցաւերու մատ-
նըուեցայ :

Նագարաի .

Խիստ գովելի ձիրքերով մէկ աղւորի մը զար-
նըուեցայ

Իիշեր ցորեկ սա կցաւիմ թէ ինչու շուտ մոռ-
ցըուեցայ :

Սոխակի պէս վարդ այտերուն հոտուն սիրտս ըզ-
մայլեցաւ

Մի փափուկ ձեռքը ձեռքըս զգացի խիստ այլայ-
լեցաւ

Յուցուցի սրտիս նալին անիքները գալարեցաւ

Իա կը սիրեմ զքեզ ըսաւ իմ ալ սիրտըս դալա-
րեցաւ :

Ինկաւ գիրկըս գորովանօք մը սեղմեցի սրտիս վը-
րայ

Փռեց փափուկ չբազուկները ցաւակոր ճիտիս վը-
րայ

Սիրատուչոր շրթաւներով սէր գրոշմեց ձակտիս
վրայ

Հետզ հետէ կը նշմարուէր յոյս ցաւ աղետ այ-
տիս վրայ :

Փոփոխակի երգում ըրինք չմոռնալու զիրար բնաւ
Հետեւաբար մէկ մէկ համբոյր առինք տուինք
սիրոյ գրաւ

Տեսութիւննիս շատ քիչ տեւեց եւ զատուեցանք
խիստ դժուարաւ


Արսեն երազ մ'էր տեսածըս ո՞վ էր սիրտս մէկ
տեղ տարաւ :

Չէ երազ չէր լաւ կը ճանչնամ այն ազաւնին որ
զիս սիրեց

Երազ չէր նա իրական սէր որ բովանդակ սրտիս
տիրեց

Չստիպեցի զինքը բնաւ յօժարակամ սէր ուխ-
տադրեց

Նուիրական էր երգումը չեմ կարծէր թէ զիս
պատրեց :



Վ. Ա. Ք. Ե. Լ.

Աղջիկ որչափ դեղեցիկ ես այնչափ ալ անագորոյն
Ինչու այսպէս զիս երեցիր անխնայ սիրոյդ հը-
րոյն

Թարթիչներդ մէկ մէկ նէտ են յօնքերըդ մէկ
մէկ դաշոյն

Անթիւ վերքեր բացին սրտիս երկուքն ալ ուրոյն
ուրոյն :

Ն. Գ. Բ. Ե. Լ.

Մէկ տեսնալուս պայծառ շողով այտերուդ լուրջ
վարդագոյն

Սիրահարաց ամենէն ալ ըրիր զիս թշուառագոյն:

Օ՛ մայլած եմ քան զհալուէ եւ կնդրուկ կուրծ-
քիդ հոտուն

Լցու սէր իմ զանձուկ սրտիս մի մաշեր զիս կա-
րօտուն

Ես քնանամ մշիկ մշիկ գլուխըս գիրկդ սիրուն
Դու զիս հոհէ շնչովդ զով քան զեփիւռն առա-
ւօտուն:


Ընկեղծ սիրոյ գրաւական կը բաւէ համբոյր մնալ
Օգուտ չընէր հազար երդում թէ չուզես հաս-
տատ մնալ

Որչափ ցաւ է սիրող սրտից մէկ մէկէ հեռի մնալ
Յուսով անջատ միանալու սպասենք քիչ օր մնալ:

Ըստուած պահէ մեզ այն օրուան երջանիկ ըլ-
լանք աղւոր

Դու գովելի ամուսին մը ես փեսայ արժանաւոր
Դու աչալուրջ տան տիկին մը ես ժրաջան գոր-
ծաւոր

Հաստատ սիրով գոհ սրտով կեանք անցունենք
երանաւոր:



ԳՕՇՄԵ

Խելքըս գլխէս առիր լուրջ նայուածքով մը
Սէր ազդեց սրտիս սիրավառ աչքըդ
Ընջի անգամ յամոյր հայեցուածքով մը
Սրտիկըս այրեց հրավառ աչքըդ:

Մէկ տեսնալուս դեմքըդ սրտէ սիրտ սիրուն
 Ըրաւ գաղտուկ սիրոյ տուրեւառ աչքըդ
 Քիչերն 'ի լոյս անքուն ցաւօք օրն 'ի թուն
 Մատնեց սիրտս սիրոյ մշտավառ աչքըդ :

Քեզ տեսնալէս 'ի վեր սէր կաթեց սիրտըս
 Կաթիլ կաթիլ սիրոյ վարդավառ աչքըդ
 Այն օրէ 'ի վեր որ քեզ սիրեց սիրտըս
 Ըրաւ տրտում տխուր զիս թշուառ աչքըդ

Քանի կը կրես սա սիրտ անագորուն
 Վիտեմ կընէ շատեր դեռ չուառ աչքըդ
 Յաւոց հեծեծանօք նորանց ամենուն
 Պիտի ընէ անշուշտ քեզ թշուառ աչքըդ :

Տ Ի Վ Ա Ն Ի

Քեզ տեսնողին քով չի ձգեր խիստ ամօթ աչքդ
 ինգուիդ :

Թշուառութեան պատճառ կըլլայ շատերուն աչ-
 քըդ ինգուիդ :

Վարդ այտերուդ անուշ հոտը ատնելէ չը կըշտաց-
 ուիր :

Նայողներուն խելքը գլխէն կաունէ ո՛հ աչքըդ
 ինգուիդ :

Արդ՛հէի կամօք սրտի ուղեիդ բոլոր գոյքըս

Անուշ հոգիս ատնել կուզէ անողորմ աչքըդ ին-
 գուիդ :

Քիտնալ կուզես թէ ի՞նչ է քու արժէքըդ ան-
նըմանըս

Չորս հնդկաստան կարժէ մինակ սիրալիր աչքըդ
ինգուիդ :

Տկար սիրտըս որ մէկ ցաւի համբերէ ապաշնորհ
Քեզ սիրողին գուն մէկ ցաւ էս հազար բիւր
աչքդ ինգուիդ :

Քիտնալ կուզես թէ ինչու քեզ խիստ շատեր կը-
մեծարեն

Մեծարանաց առիթ ունիս գլխաւոր աչքըդ ին-
գուիդ :

Երջանկութեան առիթ ընտրել ուզենէ սիրտըս
զքեզ

Պուտայ արդեօք հաճութեան մէկ նշան մը աչքըդ
ինգուիդ :

ՔԱԼԷՆՏԻՐ

Ընգութ մընէ իմ սէրըս խեղճ վիճակիս փոյթ
չունի

Յողդողդ վարդուկ մընէ ո՛հ հէք սոխակիս փոյթ
չունի :

Քիտէ անշուշտ կը սիրեմ անձինս չափ ես զինքը
Աըմնայ միշտ անտարբեր նպատակիս փոյթ չունի :

Եռանց իրեն ապրելու կարող չըլլալս լաւ գիտէ
Կենաց ընկեր ըլլալու առանձնակիս փոյթ չունի :

Գիտէ ցաւօք կանցունեմ անմխիթար օրերըս
Ենդորրուծիւն տալ սիրոյ յուսաբեկիս փոյթ
չունի :

Քար է դարցեր ալ սիրտը ինչ որ ընեմ անօգուտ
Գարման ընել խիստ ցաւոց պատանեկիս փոյթ
չունի :

Նորա սիրոյն կը ճգնիմ աշխարհի եւ բաղտիս հէտ
Ենյուսալի ցանկուծիւն յաղթանակիս փոյթ չունի :

Ո՛հ վարժած է անհաստատ նոր օր նոր սէր ըզ-
գալու
Հետեւիլ իմ սուրբ սիրոյ նշանակիս փոյթ չունի :

ԳԱԼԵՆՏԷՐԻ ԲՈՊԱՅԻ

Եւ յսօր աղւոր աղջիկ մը տեսայ սիրուն աչքերով
Չիւնի նման ճերմակ էր կուրծքը կլոր ծիծերով
Արդ այտերը աննման աղեղնաձեւ յօնքերով :

Նախաբան

Խելքըս գլխէս գրաւեց ատ աղուորը ո՞վ էր ո՞վ :
Ենուշ հովով տարուբեր շէկ ոսկեփայլ մազերը
Գողտրիկ դիմաց զարդարանք լուրջ սեւորրակ
նիշերը
Խոցեց սիրտըս կարեւէր սերազդեցիկ բիբերը :

Ենցաւ քովես անուշ մը երեսս 'ի վեր նայեցաւ
Թիւթեց սիրտըս անսովոր զգացում մը արթնցաւ
Աորսնցուցի ինք զինքըս աչուրներըս մթնցաւ :

Նոսկու ընկերքս չէր զօրէր որ ետեւէն երթայի
 Գուցէ թէ զիս կը սիրէր ոտու ընկերք ի յնայի
 Որու կըսեմ չեն ճանչնար մէկ մը տեղը զիտնայի :

ԹԻՆՆԻՍ

Ընգուտ բաղտը սէրս ինէ տար ածեց
 Մեր անջատման ասի երկրորդ տար ինէ
 Չիտեմ արդեօք գորգը ուր տեղ տարածեց
 Կուռնկ տեսնաս սիրոյ բարեւ տար ինէ :

Եթէ բարեւ մալ ան խրկէ կամ ինէ
 Տար բեր անմոռ անկէ ըլլայ կամ ինէ
 Ըսէ սիրոյս թէ չէ պակսած կամ ինէ
 Չեմ ցանձրացած որչափ սիրոյն ասար ինէ :

Ո՛հ կը սիրեմ զայն զիս որչափ ատենէ
 Նա մոռցերէ հէքըս որչափ ատեն է
 Ես կը մեռնիմ եթէ կամքը ատ էնէ
 Թող հիմակուց կարմիր կապէ տար ինէ :

Գիտեմ անգութ միտքըդ աս է չէ մըսեր
 Սիրոյդ նշան ալ ինծի պէտք չէ մըսէր
 Քեզ սիրելուս մեծ անեծք մը չեմ ըսեր
 Բաղտը ցաւէս կտոր մ'ալ քեզ տար ինէ :

ՈՂԻ Ի ԳԻՇԵՐ ԽԵԻՇԵՐ

Գիշեր խաւար երկինք նսեմ տխրամտ՝ սրտիս
 նման

Մինչ մնութիւն հանուրց խաղաղ ես գերի բաղ-
տիս բերման

Օղորկ երկնաձիր հանգիստ քնոյ խիստ ցաւօք տա-
րապայման

Նոր տրտմութեանց աղիտաբեր նոր աւուր մնամ
ծագման

Վ. Գ. Գ. Գ.

Լէր տէր վիրացս սպեղանի Լէր Աստուած ցաւոյս
դարման

Տուր տէր հանգիստ թէ ոչ յաստիս դերեղման
նախաժաման :

Ո՛ւր իմ օրեր անմեղութեան հրճուալից երջան-
կական

Ո՛ւր իմ աւուրք պատանեկան եւ հաճոյք նուի-
րական

Ո՛ւր որդեսէր հօրըս գգուանք կենսատու գիրկ
մայրական

Ո՛հ մնացի զուրկ յամենից անխնամ անօգնական :

Աշխարհ ամէն ՚ի քուն անուշ ես արթուն յեց
ի սնար

Ճիտ ցաւակոր աչք յարտօսր աղէկէզ անմխիթար

Սիրտ տրտմալից Լիւծեալ ցաւօք ո՛հ ինչու ես ընդ
երկար

Ապաշնորհ կուսիմը սէր կըկրեմ յիմարաբար :

Ո՛ մուսայգ գիշերային ողբերգակ քնարիդ լար

Օարկ որ երգեմ ողբ տխրագին տխրամած սրը-
տիս յարմար

Օարկ որ ողբամ անտանելի ցաւերըս իմ անհամար

Եւ սիսիանք տխուր սրտիս արտասուեմ աղբերա-
մար :

Շ. Ա. Ր. Բ. Ի

Եղանակ ահապինսէ տէշտէ կէօնի-Լ.

Ղանչցու սիրուն կամքըդ ինծի
Կուզե՞ս որ սիրեմ քեզի
Կասկած մընէր աղւոր խուզի :


Նախարար .

Սիրտըս սիրոյդ կապուած է միշտ
Թէ եւ քաշէ հազար թիւր վիշտ :

Յաւըս պատմեմ նէ տիրուհւոյս
Դարման կրնաս ընել ցաւոյս
Չե՞ս մի հաւտար իմ աչքիս լոյս :

Քեզի համար կապրիմ մինակ
Երգերուս սէրդ է հեղինակ
Լեզուդ մեզրէ ալ քաղցրունակ :

Ընգթութեանդ չափը անցաւ
Ընքըս արիւն արտասուք լեցաւ
Յաւ չիմնաց գլխէս անցաւ :



ՇԱՐՔԻ

Եղանակ շէշի՞ մհս- ուր կե-շէլ.

Կըսիրեմ զքեզ աղւոր
Ընձինըս չափ իրաւոր
Պայըդ պօսըդ փառաւոր:

Վազարաւ.

Շատ աղւոր ես շատ աղւոր:

Ո՛հ զիս այսպէս անխնայ
Մայրեր ցաւըս կաւելնայ
Քար սիրտ պէտք է դիմանայ:

Սիրոյդ գերին եմ եղեր
Հէք սրտիկըս մի նեղէր
Քեզ կը գովեն շատ տեղէր:

Գարման եղի ցաւերուս
Խնայէ սէր արեւուս
Կասկած մընէր սիրելուս:

ՇԱՐՔԻ

Եղանակ եղէ եւ ու-ղէ եւ.

Աղւոր մըն ես սիրուն աչքով
Հասակաչափ շեկ մազերով
Վարօտ այտեր սեւ նիշերով:

Նահարար .

Թէ զիս սիրես հաստատ սիրով
Քուկըդ կըլլամ հողով մարմնով :

Օքեզ զիրկըս կը մեծցունեմ
Սէր ու շաքար կը կերցունեմ
Խիստ երջանիկ կեանք կանցունեմ :

Աարդի մը պէս կը հոտուըտամ
Կը ջանամ որ ձանձրոյթ չըտամ
Համբոյր մը տաս գոյքըս կուտամ :

Երկու սիրող սիրտ մէկ մէկէ
Օատել մահն ալ անկարող է
Ընհնար է զատուիլ քենէ :

Մ Ե Ն Ի

Սէր ինձի .

Չայնդ լսեմ կը գողամ ինչէր չըրիր
Ո՛հ ինչպէս ալ խաբուեցայ միտքըս միշտ կը
Ինէ առաջ խաբւողին վիճակը դա
Գիտէի որ խիստ վերջը ընելիքդ ա
Կարծէս թէ ցաւ ըլլալու սէրըդ պակա
Գէշ մի կըլլար անողորմ թէ սիրտդ լը
Որըն որ վաստըկիւր աչխարհի կէ
Գիտէիր դեմքըդ կըր լուսնի մը պէ

Կերէիր .

Խիղճըդ ինչպէս կը ներէր ցաւած սիրտըս ,
 Արչափ տեսնալ կուղէի դէմքդ ինէ ծած
 Գթութեան դուռը սրտիդ հիքիս դէմ փա
 Չէ առաջ ասանկ չէիր գթութեան պատ
 Տարին մէկ մը հիչ որ չէ զիս կուրծքիդ գր
 Ընչափ աշխատանօքըս ալ խօսքի ե
 Կերեւար դարցուածքներէդ զիս սիրել հա
 Աիրտս սփսիել կուղէիր ճանչցար որ ծա

ԹԻՆՆԻՍ

Նետերեն .


Յօնքերըդ ու բիրերըդ սրտիս մէկ մէկ
 Տես սիրոյդ ալիքները զիս որ եզրը

Նուեր է

Աիրտըդ քար դուն անողորմ սիրտըս կուզես
 Արդէն քովըս խելք չիկայ սէրըդ գլխէս

Մնցաւ օր մը .

Քեզ տեսնալէս վէր երբէք չանցուցի
 Տարի մը սահման դրիր անկէ ալ
 Պիտի դնէ գերեզման զիս կանուխ



ՍԷՄԵՅԻ ՄԻԻՍԷՏՏԷՍ

Կօզտէ սիրուն սիրոյդ ցաւօք աչքէս թափած
 արտասունքներըս
 Ք'ողքէ կուրծքըս որ իմանաս քննէ պահած դաղտ-
 նիքներըս
 Կենճութեանըս մեղքը չէ մի կըկըտրտես աղիքներըս
 Չունի հանգիստ խաղաղ սիրտըս կը դողդըղան
 ծնկուրներըս :

Վախարախ .

Մի մը կեկայ ցաւած սրտէս միտքըս որ գայ
 քաշածներըս
 Հատ որ մինչեւ գիշեր եւ շատ գիշեր մինչ լոյս
 լացածներըս :

Ար տեսնաս որ ախու վախով կը հալիմ կը մաշիմ
 սիրուդ
 Օճայլածեմ չեմ ուրանար նարօտագոյն վարդ այտե-
 ղուդ
 Սեւ աչքերուդ ինգուիներուդ յափշտակիչ լեզու-
 ներուդ
 Սիրտըս քար չէ որ դիմանայ ճիւղններուդ ու նա-
 ղերուդ :

Վախարախ .

Համբոյր մը տասն]ան ալ հազար նազով հոգիս
 կը ցաւցընես
 Տարիներով կը լացընես դիպմամբ որ մը խնդացընես
 Մի ալ կօզտէ Վստուած սիրես կօզտէ սիրտըս

կը հատցընես

Այ՛ ճար չունիմ շնորհք ըրէ ինչ ընելըս որ հարցու-
նես :

Վա՛գարա՛ն .

Ա՛ սուտ զրոյց դուն չէի՞ր մի իս սիրելու եր-
դում ըրիր
Իողդըղալով ձեռքըս գիտես բռնեցիր ու կուրծ-
քիդ տարիր
Հոս քու սէրըդ կայ ըսելով հազար փորձանք գը-
խուս բերիր
Հիմայ ասանկ որ կը մերժես սէրըս հոն չէ նէ ո՞ւր
դրիր :

Վա՛գարա՛ն .

ԳՆՕՆԼ ՄԻՒՍԷՏՏԻՍ

Քեզ տեսնալէս 'ի վեր սիրուն ինչ ընելըս չը գի-
տեմ
Աշխարհք աչքէ ձգերեմ խաչ սրտովըս քեզ կը պաշ-
տեմ
Աչքիս միակ լոյսը դուն ես չիտեմ ինչպէս հաւաս-
տեմ
Տկար լեզուս չի բաւեր որ չքնաղ գեղըդ դրուա-
տեմ :

Վա՛գարա՛ն .

Ա՛ իս մի փախիր ինէ սիրուն ես քու տեսոյդ կա-
րօտ եմ
Ո՛նէ չես սիրեր ըսէ գիտնամ զիս լերան մը ծոց նե-
տեմ :

Չե՞ս մի ցաւիր անքուն սիրոյդ գիշերներ կը
լուսցընեմ

Չի տար հանգիստ յիշատակըդ գլուխըս հանգչե-
ցընեմ :

Քենէ 'ի դատ ալ ով ունիմ վիճակըս իմացընեմ

Ընդթութեան չափն անցուցիր որու կուզես հարցը-
նեմ :

Վաճառք .

Քանի ըսի մայրեր անգութ սիրտըս քեզ ինչ ը-
րերէ

Չըլտեցիր ու չես լսեր ալ սիրտըդ քար դարցերէ

Չե՞ս մի տեսնար խեղճ վիճակըս արիւն կուլամ շատ
օր է

Քեզ սիրելուս գէշ չեմ ըսեր եթէ աստուած կը-
ներէ :

Վաճառք .

Թարթիչներըդ մէկ մէկ սլաք ցաւած սիրտըս
կը ծակեն

Եպսպրէ սեւուկ սիրուն աչքերուդ հաշտ ակնարկին

Ե՛կոտրտող նազանքներըդ հոգիս մարմնէս կը քակեն


Սեղմացու քար սիրտըդ ու զիս ազատէ սա վիճա-
կէն :

Վաճառք .

ԳՕՇՄԸ

Գարունն եկաւ այդի պարտէզ ծաղկեցաւ.

Սօխակին սիրական վարդը բացուեցաւ.



19788-58
1241

Անձկանօք կարօտով եկաւ թառեցաւ
Նողկայու չափ անուշ հոտուն կըշտացաւ :

Սօխակ երջանիկ ես մեկ ամիս տարին
Ար յագիս կարօտուն քու քաղցրիկ վարդին
Չես կըքեր ցաւերը այն սիրահարին
Այր անձկալին գգուի 'ի գիրկ օտարին :

Սօխակ իրաւ ըսէ սիրոյդ արեւուն
Ունի՞ մի վարդը սէր քեզ չափ զգայուն
Արսալասէ կարօտով գարունէ գարուն
Լսիլ բազմալի ձայն՝ սիրոյդ երգերուն :


Թէ չէ վարդըն անգուծ իմ սիրելոյս պէս
Ընդ դեմ բաղձանացրդ կը ծածկէ երես
Հա՛ . . . մենք ալ անոնցմէ գարցունեմք երես
Գուն վարդուկը ասէ ես ալ միւհրիւպէս :

Տ Ի Վ Ա Ն Ե Ի

Աշխարհք ամեն ուրախ զուարթ իմ սիրտըս տրու
տոււմ տխուր
Աշխարհք ամեն խաղան խնդան իմ սիրտըս տրոււմ
տխուր :

Անգուծ մահը չընաշխարհիկ սիրուհիս առաւ
ձեռքէս
Պիտի ըլլայ ասիկէ ետքը իմ սիրտըս տրոււմ տո
խուր :

Ուր որ երթում նորա ս'գուն ստուերը աչքիս առջևն



Կը տեսնամ նէ ինչպէս չըլլայ իմ սիրտըս տրտում
տխուր

Կուզեմ որ զիս հալէ մաշէ սիրալիւր յիշատակը
Ճիշտ սա դիմամբ պիտի կրեմ իմ սիրտըս տրտում
տխուր :


Քանի մահուամբ մինակ կրնամ նորա հետ միա
ւորիլ

Կուզեմ որ մը առաջ հատնի իմ սիրտըս տրտում
տխուր :

Չէ՛ չեմ ուզեր մխիթարանք ուրկէ ալ ըլլայ բընաւ
Յաւ վիշտ աղէտ կրել կուզէ իմ սիրտըս տրտում
տխուր :

Կեանքը ինձի տանջանք մընէ կըսպասեմ խիստ
անձկանօք

Սահուան Սինակ որ ազատէ իմ սիրտըս տրտում
տխուր :



ԳԵԼԷՆՏԵՐ

Ըւա՛ղ կեանքըս երջանիկ թշուառութեան փոխ
ուեցաւ

Բա՛ օրերըս խաղաղիկ մեծ տրտմութեան փոխուե
ցաւ :

Վիշեր ցորեկ սիրոյդ ցաւ զիս կը տանջէ անո
ղորմ

Հեշտ մանկական երգերըս ողբերգութեան փոխ
ուեցաւ :

Աշխարհք աչքիս չերեւար անուշ կեանքէս զըզ-
ուեցա

Քանզի կեանքը ալ ինձի խիստ նեղութեան փոխ-
ուեցաւ :

Տեսայ քանի անգամ մը օտարի հետ սէր զքեզ
Վստահութիւնն իմ սրտիս երկմտութեան փոխուե-
ցաւ :

Գեռ անցած օր կըսըտն^օս աչքովս տեսայ ապե-
րախտ

Չէի ուզած հաւատալ ստուգութեան փոխուեցաւ :

Բսած էի շատ անգամ նախանձորդի սէր չըտայ
Միտ չը դրիր մինչ սէրըս ատելութեան փոխուեցաւ :

Երժանի չես սիրուելու պիտի ջանամ մոռնամքեզ
Քանզի սրտիս բաղձանքը ալ ձանձրութեան փոխ-
ուեցաւ :

ԹԻՆՆԻՍ

Գիշեր ցորեկ հանգիստ չունիմ ցաւերէս
Սիրոյդ հրոյն երէլս ալ աս կարգէն է
Ինձ ի՞նչ օգուտ գուցէ երբէք ցաւերես
Մինչ չեմ գտած սրտիս վայել կար քենէ :

Արնամ մերժել զքեզ սէրըդ սիրտըս է
Սա ցաւերուս բոլոր պատճառ սիրտըս է
Նարգէս չունի՞ս զիս գթալու սիրտ ըսէ
Ըն դաշոյն մը ուղղէ սիրտըս կարգ է նէ :

Քիս մերժելո՞ղ էիւճեալ սրտիս ցաւ է ցա՛ւ
 Ա՛հ կը բաւէ ալ բաւական ցաւեցաւ
 Կը գլտորես զիս օր օրի ցաւէ ցաւ
 Չէի յուսա՞յ ինձ այսչափ ցաւ կար քենէ :

Կենացըս մէջ ապերախտ քեզ միմիայն
 Սիրերեմ եւ պիտի սիրեմ մի միայն
 Հնար ըլլար բանալ սիրտըս մի մի այն
 Քեզ բացատրեր . . . կըլլայ բաղտը կարգէ նէ :

ԸՆՁՆ ԻՄ

Մոռցի անձն իմ ապաշնորհ եւ անգուժ սա
 աղջկան սէրը
 Ը՛ն սիրտըդ ետ տո՛ւր արժանւոյն մի՛թէ հատա՞ն
 հայ կոյսերը
 Գեռ կըսպասես՞ անկեղծ սիրոյդ յարգ կը գիտնա՞յ
 զազրասէրը
 Ը՛ն հնար է հանէ մտքէդ ատ խաբուսիկ փուճ յոյ-
 սերը :

Վա՛հ-բա՛հ,

Իսկ սրտէդ սա անօգուժ սիրոյ արմատն եւ բոյ-
 սերը
 Հանէ նետէ ՚ի խոր սրտէդ անգուժ սիրոյն թեք
 սուսերը :

Ինչու անձն իմ տրտում տխուր գիշեր ցորեկ
 աչքըդ ՚ի լաց
 Կը թափառիս հեծ ՚ի հառաչ անմխիթար եւ սղաղ-
 գեաց

Ար տուայտիս 'ի ցաւ 'ի կոծ դառնակսկիծ սիրտ
 Տրայրեաց
 Բաւ է . . . մոռցի . . . չունի սրտիդ վայել սուրբ
 սիրտ այն երգմնուրաց :

Վազարա՛ն .

Վա կենացրդ անգուծ դահիճ մը կարգեցաւ
 նսեմ բաղտէդ
 Քար է դարձեր ախ՛ ալ սիրտը չըկակղընար ողո-
 քանքէդ
 Ա՛հ մի յուսար շնորհք անկէ աշխարհք երի հա-
 ուչանքէդ
 Խաչ չի փուծար երբէք մաղ մը պակսեցընել աղէ-
 տանքէդ .

Վազարա՛ն .


Վորա սիրտըն 'ի դուծ շարժել ալ ոչ երբէք
 պիտի կրնայ
 Հեծեծանացդ ձայն աղէկէդ մինչեւ երկինք թէ
 բարձրանայ
 Ա՛հ դու որչափ թշուառ ըլլաս քարէ սիրտը կը-
 դիմանայ
 Ծածկէ սաստիկ ցաւերդ անկէ որ չիմանայ ուրա-
 խանայ :

Շ. Ա. Ր. Բ. Ի


Եղա՛սի գալէնին արա եերէ .

Սիրուն սեւուկ աչքերուդ
 Վարօտագոյն այաերուդ
 Քերի եմ եղած գիտես

Ըն ու շիկ լն զ ու ն եր ու զ
կը սիրեմ :



Մ-Գ-Ե-Բ.



Յաւըս պատմելու եկայ
Դարման ուղելու եկայ
Թէ կընեքես սիրունըս
Չքեզ սիրելու եկայ
կը սիրեմ :

Թող ցաւոյս դարման ըլլայ
Տարի մը սահման ըլլայ
Ըն սա մատենին մատըդ դիր
Սուրբ սիրոյս նշան ըլլայ
կը սիրեմ :

Մ-Գ-Ե-Բ.

Լերան չափ ցաւ ունենամ
Ծովու չափ վիշտ ունենամ
Աիրուն սիրոյդ ուժովը
Ըն օրուան կը դիմանամ
կը սիրեմ :

Մ-Գ-Ե-Բ.

Անողութի մ'ալ խաչ կըսեմ
Ընճնար է որ սիրեմ
Թողաւոր մ'ալ թէ ըլլամ
Սիշտ ես զքեզ կը սիրեմ
կը սիրեմ :

Մ-Գ-Ե-Բ.

ՇՆՐԻՒ

Աղանձի շաղկերէն կէտեօշ.

Ո՞վ է տեսեր սիրուհոյս չափ գեղանի
Անմեղ է ան հրեշտակ կը նրմանի
Եւ ինչ կուզեմ թէ զիս սիրել հաւանի :

Վախարաբ .

Անմեղ է ան հրեշտակ կը նրմանի :

Հայ աղջկանց աղւորն է իմին տիրուհիս
Աուսից պարկեշտըն է մրակ սիրուհիս
Եշտարհք իմըս կը լայ եթէ սիրէ զիս :

Վախարաբ .

Սեւ աչքերը գանձ մը կարծէ գիտցողին
Սեծ պատկառանք կազգէ գեմքը տեսնողին
Խելքը գըլխէն կառնէ ձայնը լսողին :

Վախարաբ .

Կարօտով կըսպասեմ առտու իրիկուն
Տեսնալ ան աննրման պատկերն ինձ սիրուն
Վմանը չեմ գտած մեռնիմ արեւուն :

Վախարաբ :

ՇՆՐԻՒ

Աղանձի եէշիւ եախարաբ արեւինդ .

Իմին երկու աչքիս լոյսը ո՞ւր ես գացեր չեմ տես-
նար
Ո՞ւր ես սրտիս միակ յոյսը ո՞ւր ես եկու մ'ուշա-
նար

Գիտես որչափ քեզ կը իրեմ կարօտուդ չեմ դի-
մանար :

Նախարար .

Ո՞ւր ես օրտիս միակ յոյսը ո՞ւր ես եկու մ'ու-
շանար :

Չեմ մի ըսած հազար անգամ անհնար է ապրիլըս
Քենէ հեռի աչքիս յոյսը ըսէ կուզես մեռնիլըս
Որ զիս այսպէս անմխիթար թողերես տես ծիւրի-
լըս :

Նախարար .

Քենէ հեռի անցուցած մէկ ըրպէս տարիներ կը
լայ

Եւս ես որչափ պակսիլ կուզեմ ցաւս օրէ օր կը-
շատնայ

Մինակ քեզմով սիրտըս գիտես խիստ ցաւերը կը-
մոռնայ :

Նախարար .

Ո՞ւր որ երթամ սիրուն դեմքըդ աչքիս առջին կը-
տեսնամ

Իս^{ո՞ր}երեսէ որ ձգեցիր ասանկ ի՞նչ յոյս սւննամ
Ել ապրելու մահուան դուռը մօտեցիր եմ կիմանամ :

Նախարար .

ՄԵՆԻ

Յուզերէս

Եղւոր գիտես ցաւն ինչ է խեղճ օրեր ան
Ընտանելի ցաւերով դիշերներ լուս

Ընողորմի մը սիրոյն ինկեր սիրտ հատ
 Արիւն արտասուք հոսեր ու առուակներ լի
 Ընուշ կեանքըդ զոհելով մահըդ փութա
 Այնքապէս տկար սրտիւ աշխարհք զարմա :

Յընէիր

Չէիր վախնար աստուծմէ սիրտըս կը հատ
 Արակըդ զիս կը վառեր չեկար զովա
 Չէիր սիրեր ալ գոնէ երեսանց ցու
 Հիչ որ չէ գիտցողի մը վիճակըս հար
 Չի սիրելուդ պատճառը ինձի իմա
 Առիթ չեկար որ այդչափ սըրտըդ քարա

Թ Է ՆՆ Ի Ս

Հոսեցաւ


Նեղքէ կուրծքըս որ քտեցնաս հոս քու սէրըդ
 Չէիր տեսնար աչքերէս արիւն արտասուք հոսեցաւ :

Կար սիրտըս

Բեր մատներըդ ու համրէ անթիւ վիրաց
 Կուզեմ ցաւոյդ դիմանալ ալ չիմնաց
 Աթէ սէրըս յաջողէր ի՞նչ բաղձանքներ :

Հանգչեցաւ

Իս որ դնես գերեզման գրէ քարիս
 Քաշեց բիւր վիշտ տառապանք ըսաւ սիրոյ :



ՈՒՂԵՐՉ

1. Թէ տետրակիս 10 երորդ երեսի նուագը որն որ յատուք դիտմամբ առանց եղանակի մը հարմարելու գրած եմք (Թէ եւ կրնայ ղազելի եղանակաւ երգեցուիլ) եւ Թէ միւս հրատարակեալ եւ հրատարակելի երգերէն որոնք որ արժան կը դատուին, մեր ազգային Արգոյ երաժիշտներէն ՚ի սէր հայ երիտասարդու թեան եւ ՚ի պատիւ նպատակի Ն. հեղինակիս մէկ մէկ եղինակի վերածուելու եւ հասարակաց ըլլալու ըլլան փոխանակ տաճկերէն պէստեներու, գոհ եւ շնորհակալ կըլլանք :
2. Սոյն երգերէս 120 կտորի չափ պատրաստ ունէինք ալ նէ՝ ազգերնուս մէջ աւելի պիտանի եւ աւելի օգտակար գրքերու անգամ 8—10 ղուրշ տուող 500 անձ չը գտնուիլը լաւ գիտնալով, (որ գէթ կարօղ ըլլայինք ծախքերնիս հանել) հասարակութեան դիւրութիւն մը տալու համար պարտաւորեցանք 8—10 տետրակի բաժնել որ եթէ նպատակնիս յարգուած տեսնենք, պատրաստենք հետ զհետէ հրատարակել :



60

Հայ հեղինակու թիւն մը ինչ ընդունելութիւն որ
կը գտնայ հասարակութենէն՝ մերնալ նոյնը գը-
տաւ, ըսել կուզեմ ծախքը չըհանեց, եւ կար-
ծեմ երկրորդ տետրակիս փորձովը պիտի պար-
տաւորիմ փոխանակ 40 փարայի 60 ծախել:



Առաջին եւ երկրորդ տետրակները բոլոր
Հայ գրավաճառաց քով կը ծախուին գին
40 փարայ:

